

ՄԻ ՆՄՈՒՂ «ՄԱԽԼԱՍԻ» ՓԷԼԻԷՏՕՆՆԵՐԻՑ

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը

Այսօր Թիֆլիզի անգլխութեան վերջ կը դրուի:
Երեք ժամին (կէսօրից յետոյ) Իզմայիլ փաշան
ընտրուելու է Վրաստանի մայրաքաղաքի ներկայա-
ցուցիչ:

Մի հետաքրքրական երեւոյթ: Իսկապէս Թիֆլիզի
բնակիչներէ ոչ մի դասակարգ անկեղծօրէն չէ կամե-
նում նորան քաղաքագլխի բաղկաթողի վրայ բազմած
տեսնել, բայց և այնպէս նա քաղաքագլուխ կընտրուի:
Մէթէ մեր այս հանելուկներով լի քաղաքում՝ սա ան-
մենից աւելի գլուխ կոտրելու հանելուկը չէ: Աշխատենք
սակալն լուծել առեղծանելիքը: Բայց նախ քննենք ու-
շիմ ընթերցողի հետ միասին թէ ով և ինչ պատճա-
ռով չէ կամենում Իզմայիլ փաշային քաղաքագլուխ
տեսնել:

Ա.

Ձեն կամենում նորան բոլոր վրացիք, որոնք, ի-
մէրէլներին, գուրիացիներին, փշափներին և թուշերին
հետը հաշուելով, կազմում են քաղաքիս բնակիչների
մի քառորդ մասը:

ա.

Վրացոց արիստօկրատիան մատեմատիկական —
ազնուապետական հիմունքներ է առաջ բերում այս
թեկնածութեան դէմ: Թիֆլիզը այն նահանգի գլխաւոր
քաղաքն է, ասում են նոքա, ուր վերջին վիճակազրա-

կան տեղեկութիւններ չամառայն, իշխանական ցեղերին պատկանող 4926 շառաւիղներ են ապրում, որոնցից 2553-ը տղամարդ և 2372-ը կին¹⁾։ Եթէ վերջիններին մի կողմ թողնենք, միթէ ներելի չէ ենթադրել, որ հէնց այն 2553 իշխանների մէջ մի պայծառափալլ անձն կը գտնուէր, որ արժանի լինէր կրելու Վրաստանի մայրաքաղաքի ներկայացուցչի արծաթափալլ շղթան։ Միթէ արդարացի չէր լինի պահանջել այդ այնքան առաւելութիւններից զրկուած ազնուականների համար։ Եւ վերջապէս միթէ մօտակալ անցեալում պարտաճանաչ ազգաբնակչութիւնը քաղաքագլուխ չէր ընտրում իշխանների, միթէ նա չընտրեց Մամիկոնեանների շառաւիղ իշխան Եազօն Թումանեանին կամ Լօնգիմանի շառաւիղ իշխ. Նիկողայոս Արղութեանին։ Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց այժմ, որ կամենում են ընտրել մի սոսկ մարդու, որ նոյն իսկ չին չունի. O tempora! (o դրօշբա!)։ Այ, ազնիւ վրաց ազնուականութիւնը կը դիմադրէ այս թեկնածութեան. այս նորա պատմական պարտքն է։

Բ.

Վրաց արիստոկրատիայի այս պատճառաբանութեան համամիտ են միտնգումայն սակաւաթիւ հալ իշխանական ցեղերը և համամիտ ձևանալու պարտք են համարում բոլոր հալ չինովնիկները 14-րդ կլասից սկսած։

Գ.

Այսպէս է դատում վրաց ազնուապետութիւնը, իսկ ինտելիգենցիա կազմող չիրենց հայրենիքի պատրիօտ վրացիքն ամփոփում են իրենց հակակրօնութիւնը Իզմալիլ փաշայի վերաբերութեամբ հետեւեալ բանա-

¹⁾ См Сводъ статистическихъ данныхъ и населеніи Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1836 г. Изд. закавк. статист. комитета.

ձևով. «նա իր երեք համախոհների հետ, իրաւունք համարեց վրացի իրաւասուններին վռնդել քաղաքային վարչութիւնից, ուստի նա ոչ միայն անարժան է մեր մայրենի քաղաքի գլուխ լինելու, այլ մեր պարտաւորութիւնն է նորա թշնամիների գլուխն անցնել և այն ժամանակ Ծերեթէլին էլ չի փրկել նորան:

«Անկցի, անկցի»:

Բ.

Եթէ ազնուապետական դասակարգից անցնենք ուղղակի այն ստուար մեծամասնութեան, որ կազմում են վաճառականներն ու արհեստավորները, նոքա ևս չեն ուզում Իզմայիլ փաշային:

«Ախար, հէր օխնած, դա ինչ գալալա կուլի, ասում են նոքա, ուրիշ վունչիչ վուր չլի՝ գալալէն բօյով բուսաթով մարդ պիտի ըլի, միւր Զրօխնէքին, նըրանց ջգրու, էնէնց վիդ պիտի ունենալ վուր խալիսի աչքը վրէն մնայ. ախար վունց էս է, վունց էն:

«Ասում ին դալամ ունէ կօսէ. տօ քաղկի գօրա ինչ, աղբէր, թէ դրուստ լաւ ղալմի տէր է թող «Արձագանքումը» գրէ. էդ կաղէթում գրողները դիվ էլ զօրբա մարդիկ ին. թէ Եագօնը իրիք շարք առանց աշիբկի չէր գրում, էնգուր մինչ մարդկանց հիդ չէր նստում ու չէր վիկենում ալ: Չէ, ինչ ուզումիք ասեցէք համա Իզմայլովը միւր քաղկի խարջ չէ. մարթը քաղկումը պէտք է ըլի ղօչաղ ու վուչ թէ մենակ գլասնութէնումը:

Գ.

Խնտէլիգենցիային և հարուստ դասակարգին պատկանող հայերն ընդդէմ են նորա քաղաքագլխանալուն, որովհետեւ առաջիններից իւրաքանչիւրը, Գօգիլօյից սկսած, իրեն է միայն արժանի համարում այդ պաշտօնին, իսկ երկրորդների համար, չօլախից սկսած, լաւ «դալաւէն» նա է որ...:

Դ.

Գալով առանձին կուսակցութիւններին, պ. Իգմայլեանցի թեկնածութեան սաստիկ հակառակորդներ են համախոհները.

«Դա բոլորովին չէ ըմբռնում, ասում են նոքա, երիտասարդութեան քաղաքական նշանակութիւնը, ապացոյց որ նա քաղաքի իրաւասու չընտրեց ոչ մի երիտասարդ: Դա... չէ հասկանում երիտասարդութեան ապահովութեան բեղմնաւոր գաղափարը, որովհետեւ նա ոչ մի նիւթապէս ապահովող պաշտօն չտուեց մեր Քաղաքային վարկային ընկերութեան մէջ: Ուրեմն եզրակացնում են նոքա, դորան ոչ մի կերպ չպէտք է ընտրել, որովհետեւ դա ոչ թէ երիտասարդութեան, այլ բուրժուազիայի ներկայացուցիչ կլինի:

Կանգ առնենք այստեղ:

Այսպէս ուրեմն ոչ վրացիքը, ոչ իմերէշները, ոչ գուրիացիները, ոչ փշաւները, ոչ հայ ազնուականները, ոչ պաշտօնախնդիր խամախոհները, ոչ ժողովուրդը վերջապէս չեն կամենում քաղաքագլուխ տեսնել Իգմայիլ փաշային: Ուրեմն ո՞վ է ուզում դորան և ի՞նչ իրաւունքով էք պնդում այդպէս համարձակ որ դա կընտրուի այսօր քաղաքագլուխ, հարցնում է ուշիմ ընթերցողը:

— Այո՛, դա կընտրուի, ասում եմ ես, որովհետեւ դորան կընտրեն իրաւասուները:

— Բայց իրաւասուները, այն էլ ոչ բոլորը, այլ մի 4—5 մարդ, հօ իրենց համար չեն ընտրում քաղաքագլուխ, այլ ինչպէս հենց խօսքի կազմութիւնը ցոյց է տալիս՝ քաղաքի համար:

— Ղորթ էք հրամայում, պտտասխանում եմ ես, բայց շատ բաներ կան աշխարհիս երեսին, բարեկամ Հօրացիօ, ասել է Շէքսպիրը:

— Բայց այդ պատասխան չէ, պ. Մախլաս, իսկ
դուք խոստացաք լուծել հանելուկը:

— Միթէ խոստացել եմ, ուրեմն ասեմ ձեզ՝ նա
կաշառել է իրաւասուններին...

— Խնչպէս թէ կաշառել է, բայց չէ որ նա նիւ-
թական միջոցների տէր չէ:

— Այո՛, այդ ճշմարիտ է, բայց կարելի է կաշառել
ազնիւ գործունէութեամբ, անձնուէր աշխատանքով,
խելքի նրբութեամբ...

— Մեզ մնում է ցաւել, որ այդ խելքի նրբութիւ-
նից նա ձեզ բաժին չի հանիլ, պ. Մախլաս, ապա թէ
սչ այս տեսակ անհամ թերթօն չէիք գրիլ, ընդմիջում է
զայլրացած ընթերցողը:

— Ուրեմն հանելուկին հանելուկով պատասխանեմ.
դուք գիտէք թէ ինչ է Դամոկլէսի սուրը:

Արդ՝ հարցնում եմ ձեզ, ինչն է նախադասելի,
ընտրուածը թէ...

Sapienti non sat!

ՄԱԽԼԱՍ